ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ք. Երևան 03.ապրիլի.2019թ.

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 039475-1

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ԴՐԱՄԱՐԿՂՈՒՄ ԱՌԿԱ ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎՐԱ ԱՐԳԵԼԱՆՔ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՄԱՍԻՆ

ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության հարկադիր գանձումների բաժնի գլխավոր մասնագետ Վ.Ավետիսյանս, մասնակցությամբ նույն բաժնի 1-ին կարգի մասնագետ Հ.Հակոբյանի, համաձայն ՀՀ ՊԵԿ նախագահի 27.03.2019թ. թիվ ԱՀ 039475 հանձնարարագրի, ուսումնասիրելով հարկ վճարողի հարկային գործը և 15.03.2019թ. թիվ 394/02-Ա վարչական վարույթների նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

<ԱԺՈՒՐ> ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00427243, պետ. գրանցման համարը՝ 278.110.02517, հասցե՝ ք.Երևան, Ավանի Բրյուսովի թաղ., 66-34) վերաբերյալ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի կողմից 15.03.2019թ. կայացվել է վարչական վարույթ չկատարված հարկային պարտավորությունների գանձման թիվ 394/02-Ա որոշումը, որի շրջանակներում հարկային պարտավորությունը կազմում է 1.579.088 դրամ /ապառք՝ 1.000.000 դրամ, տույժ՝ 579.088 դրամ/:

Գանձման ենթակա չկատարած պարտավորության նկատմամբ օրենքով սահմանված կարգով և չափերով հաշվարկվում են տույժեր, որոնք ենթակա են կատարման մինչև սույն որոշման կատարման օրը՝ ՀՀ հարկային օրենսգրքով կամ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերի հետ միասին:

Արդյունքում 15.03.2019թ. թիվ 394/02-Ա վարչական վարույթի շրջանակներում 03.04.2019թ. դրությամբ չկատարված հարկային պարտավորությունը կազմում է 1.579.088 դրամ:

ՀՀ հարկային օրենսգրքի 431-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն <ԱԺՈՒՐ> ՍՊԸ-ի բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների բացակայության հետևանքով ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 431-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով անհրաժեշտ է արգելանք կիրառել դրամակղում առկա կանխիկ դրամական միջոցների վրա:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 429-րդ 430-րդ և 431-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1.Արգելանք դնել <ԱԺՈՒՐ> ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00427243) դրամարկղում առկա կանխիկ դրամական միջոցների վրա 1.579.088 դրամի չափով:

2. Նրան արգելել տնօրինել, տիրապետել, օգտագործել արգելադրված գումարը:

3. Որոշման պատճենը ոչ ուշ, քան այն ընդունելու հաջորդ օրը, պատշաճ ձևով ուղարկել <ԱԺՈՒՐ> ՍՊԸ-ին:

4.Արգելանք դնելու մասին որոշումը պարտադիր է բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց, կազմակերպությունների ու ֆիզիկական անձանց համար և ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

5.Սույն որոշումը կարող է բողոքարկվել հարկային մարմին կամ ՀՀ վարչական դատարան: Որոշման արտադատական կարգով բողոքարկումը, համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 432-րդ հոդվածի 5-րդ մասի, չի կասեցնում որոշման կատարումը:

Սույն որոշումը ստանալու պահից Դուք նախազգուշացված եք արգելադրված գումարը վատնելու, օտարելու, թաքցնելու կամ ապօրինաբար մեկ ուրիշին հանձնելու դեպքում վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկվելու մասին:

Վ.Ավետիսյան _____ Հ.Հակոբյան_____